ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2017թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՌԱԼՖ ՍԵԶԱՐԻ ՅԻՐԻԿՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2799-րդ տարեդարձի առթիվ, տնտեսության զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի և Երևան քաղաքում ակտիվ գործունեություն ծավալելու համար ՎիվաՍել–ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Սեզարի Յիրիկյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՌԱԼՖ ՍԵԶԱՐԻ ՅԻՐԻԿՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռալֆ Սեզարի Յիրիկյանը ծնվել է 1967 թվականի նոյեմբերի 16-ին, Բեյրութում:

1991 թվականին ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանը՝ ստանալով տնտեսագիտության բակալավրի կոչում: 1992 թվականին նույն համալսարանում ստացել է նաև գործարար կառավարման բակալավրի կոչում:

Ռալֆ Յիրիկյանը ՎիվաՍել–ՄՏՍ–ի («ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ) գլխավոր տնօրենն է: Նրա ղեկավարությամբ, 2004 թվականին հիմնադրված ՎիվաՍել–ՄՏՍ–ը գործունեության տարիների ընթացքում դարձել է Հայաստանում հեռահաղորդակցության առաջատար օպերատորը:

Բազմաթիվ գիտական, գործարար և տեխնոլոգիական հաստատությունների և հարթակների հրավերով հանդես է եկել դասախոսություններով և ելույթներով՝ ստանալով բազմաթիվ բուհերի և գիտահետազոտական կենտրոնների պատվավոր դոկտորի և պրոֆեսորի կոչումներ:

Ռալֆ Յիրիկյանն արժանացել է բազմաթիվ հայաստանյան և միջազգային մրցանակների ու մեդալների:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Ռալֆ Յիրիկյանի ներդրած ավանդը տնտեսության զարգացման գործում, ինչպես նաև ակտիվ գործունեությունը՝ առաջարկվում է Ռալֆ Սեզարի Յիրիկյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌԱԼՖ ՍԵԶԱՐԻ ՅԻՐԻԿՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռալֆ Սեզարի Յիրիկյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՌԱԼՖ ՍԵԶԱՐԻ ՅԻՐԻԿՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռալֆ Սեզարի Յիրիկյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ